ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 173ξ40 «30» 09 2015թ.

ԵՊՀ-ՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈԴԱՎՈՐՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համալսարանի սովորողների կողմից պատրաստվող աշխատանքների կոդավորման միասնական կիրառումն ապահովելու նպատակով Հրամայում եմ.

1. 2015/16 ուսումնական տարվանից ԵՊՀ սովորողների աշխատանքները (մագիստրոսական թեզեր, ավարտական աշխատանքներ, կուրսային աշխատանքներ) պատրաստել համակարգչային տեքստերի «ՅՈՒՆԻԿՈԴ» (Unicode) կոդավորման համակարգի և դրան համապատասխան հայկական տառատեսակների (Sylfaen, Arial Unicode, Arian AMU, GHEA Grapalat, GHEA Mariam) կիրառմամբ, բացառությամբ բնագիտական ֆակուլտետներում օգտագործվող հատուկ մասնագիտական ծրագրերի:

2. Հանձնարարել ԵՊՀ ֆակուլտետների դեկաններին և մագիստրոսական ծրագրեր իրականացնող կենտրոնների ղեկավարներին տեղեկացնել սույն հրամանի մասին թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների ղեկավարներին և ուսանողներին, ինչպես նաև խստորեն հետևել սույն հրամանի պահանջների կատարմանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝ Ա. Սիմոնյան